Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (24 դասաժամ), հայոց լեզու և գրականություն(17 դասաժամ) ինֆորմատիկա (14 դասաժամ), ֆիզիկա (12 դասաժամ), պատմություն (13 դասաժամ), ուսուցիչների և խոհարար մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ՝ 1 հաստիք, գազաեռակցող մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ 1,5 հաստիք թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. **նոյեմբերի 29-ից** մինչև **դեկտեմբերի 12-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ.դեկտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին**, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում, հասցե՝ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Սպանդարյան փողոց շենք 4: Տեղեկությունների համար զանգահարել /0285/2-34-29, /077/16-55-04 հեռախոսահամարով: